



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՉՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 15(355) «11» սեպտեմբերի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
238	«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերանվանման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի N 575 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 891-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 656-Ն որոշումը.....	4
239	«Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 657-Ն որոշումը.....	5
240	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 658-Ն որոշումը.....	8
241	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Մաշկավեներոլոգիական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանելու մասին» ԱՀ կառավարության N 667-Ն որոշումը.....	10
242	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանելու մասին» ԱՀ կառավարության N 668-Ն որոշումը.....	11
243	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանելու մասին» ԱՀ կառավարության N 669-Ն որոշումը.....	12
244	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 684-Ն որոշումը.....	13

245	«Գանձասար վանական համալիր», «Հունոտի կիրճ» և «Տոդ» զբոսաշրջային երթուղիներով ուղևորափոխադրումների կազմակերպման պայմանները հաստատելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» ԱՀ կառավարության N 685-Ն որոշումը...	16
246	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 689-Ն որոշումը.....	18
247	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 690-Ն որոշումը.....	19
248	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 691-Ն որոշումը.....	20
249	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի N 135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 692-Ն որոշումը.....	21
250	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 29-ի N23-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 693-Ն որոշումը.....	22
251	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 699-Ն որոշումը.....	24
252	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 12-ի N 99-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 721-Ն որոշումը.....	27
253	«Ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի N 520-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 722-Ն որոշումը.....	30
254	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 730-Ն որոշումը.....	33
255	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 731-Ն որոշումը.....	34
256	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 743-Ն որոշումը.....	35

257	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի N 343 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 749-Ն որոշումը.....	36
258	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 752-Ն որոշումը.....	41
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
259	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 1452/02/17 որոշումը.....	42
260	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 0430/02/17 որոշումը.....	47
261	ԱՀ Գերագույն դատարանի վարչական գործ ԸԻԴ 0231/05/16 որոշումը	57

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2018թ.

N 656-Ն

ք.Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 28-Ի N 575 ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 891-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. «Սղնախի միջնակարգ դպրոց» և «Ուղտասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանել համապատասխանաբար «Սղնախի Նարվեն Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» և «Ուղտասարի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 575 որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 23-րդ տողի «Սղնախի միջնակարգ դպրոց» և 44-րդ տողի «Ուղտասարի հիմնական դպրոց» բառերը փոխարինել համապատասխանաբար «Սղնախի Նարվեն Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» և «Ուղտասարի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու և օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 891-Ն որոշմամբ հաստատված N3 հավելվածի 1-ին ցանկի 10-րդ տողի «Սղնախի միջնակարգ դպրոց» և 31-րդ տողի «Ուղտասարի հիմնական դպրոց» բառերը փոխարինել համապատասխանաբար «Սղնախի Նարվեն Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» և «Ուղտասարի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» բառերով:

4. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2018թ.

N 657-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի և N 3 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ	-	-	508 038,0	-
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	358 038,0	-
	9		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	358 038,0	-
		1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	358 038,0	-
		04	Ընթացիկ նորոգման, բարեկարգման և կոմունալ տնտեսության գծով ԱՀ շրջանների կարողությունների զարգացման ծախսեր	-	-	358 038,0	-
			Ասկերանի շրջանի վարչակազմ	-	-	34 400,0	-
			Հաղրութի շրջանի վարչակազմ	-	-	69 940,0	-
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	-	-	61 400,0	-
			Մարտունու շրջանի վարչակազմ	-	-	63 598,0	-
			Շահումյանի շրջանի վարչակազմ	-	-	6 100,0	-
			Շուշիի շրջանի վարչակազմ	-	-	46 100,0	-
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	76 500,0	-
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱՌՄԵՐ	-	-	150 000,0	-
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	-	150 000,0	-
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	150 000,0	-
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	150 000,0	-
			ԱՀ կառավարություն	-	-	150 000,0	-

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

(հազ. դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐԸ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
	Առաջին Էռամսյակ	Առաջին Կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	508 038,0	-
այդ թվում՝				
Փոխառու զուտ միջոցներ	-	-	508 038,0	-
1. Վարկերի և փոխատվությունների ստացում	-	-	508 038,0	-
2. Ստացված վարկերի և փոխատվությունների մարում	-	-	-	-
Ֆինանսական զուտ ակտիվներ	-	-	-	-
1.Բաժնետոմսերի իրացումից մուտքեր	-	-	-	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2018թ.

N 658-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	(60 000,0)
	7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(60 000,0)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(60 000,0)
		06	Վերաբնակեցման նպատակով բնակարանաշինության ծախսեր	-	-	-	(60 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	-	(60 000,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	-	-	60 000,0
	2		Այլ ծախսեր	-	-	-	60 000,0
		1	Այլ ծրագրեր	-	-	-	60 000,0
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	60 000,0	60 000,0
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	-	-	50 000,0	50 000,0
			Ստեփանակերտի քաղաքապետարան	-	-	10 000,0	10 000,0
		03	Հանրապետական միջոցառումների (միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ) իրականացման ծրագրեր	-	-	(60 000,0)	-
			ԱՀ կառավարություն	-	-	(60 000,0)	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 օգոստոսի 2018թ.

N 668-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանել «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ ընկերություն):

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան փոփոխություններ կատարել ընկերության կանոնադրության մեջ և ապահովել համապատասխան փոփոխությունների գրանցումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 օգոստոսի 2018թ.

N 669-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանել «Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ ընկերություն):

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան փոփոխություններ կատարել ընկերության կանոնադրության մեջ և ապահովել համապատասխան փոփոխությունների գրանցումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2018թ.

N 684-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի օգոստոսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
2			Ծերություն	-	-	(35000,0)	(139000,0)
		1	Ծերություն	-	-	(35000,0)	(139000,0)
		01	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ			(5000,0)	(5000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն			(5000,0)	(5000,0)
		03	Սոցիալական կենսաթոշակներ	-	-	(20000,0)	(20000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(20000,0)	(20000,0)
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	-	-	(10000,0)	(114000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(10000,0)	(114000,0)
3			Հարազատին կորցրած անձինք	-	-	(10000,0)	(10000,0)
		1	Հարազատին կորցրած անձինք	-	-	(10000,0)	(10000,0)
		01	Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	-	-	(10000,0)	(10000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(10000,0)	(10000,0)
4			Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	10000,0	10000,0
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	10000,0	10000,0
		06	Դրամական (նյութական) օգնություն սոցիալապես անապահով քաղաքացիներին և ընտանիքներին	-	-	10000,0	10000,0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման	-	-	10000,0	10000,0

			նախարարություն				
	7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	(50000.0)	(50000.0)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	(50000.0)	(50000.0)
		01	Վերաբնակիչների և փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ	-	-	(50000.0)	(50000.0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(50000.0)	(50000.0)
		04	Ամենամյա դրամական օգնություններ և պարգևավճարներ	-	-	(70000.0)	(70000.0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(70000.0)	(70000.0)
		06	Վերաբնակեցման նպատակով բնակարանաշինության ծախսեր	-	-	70000.0	70000.0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	70000.0	70000.0
	9		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	-	-	85000.0	189000.0
		2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	85000.0	189000.0
		10	Պետական աջակցություն Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամին	-	-	85000.0	189000.0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	85000.0	189000.0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2018թ.

N 685-Ն

ք.Ստեփանակերտ

«ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ», «ՀՈՒՆՈՏԻ ԿԻՐՃ» ԵՎ «ՏՈՂ» ԶԲՈՍԱՇՐՋԱՑԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Արցախի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը, «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել «Գանձասարի վանական համալիր», «Հունտի կիրճ» և «Տող» զբոսաշրջային երթուղիներով ուղևորափոխադրումների կազմակերպման պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված զբոսաշրջային երթուղիներով ուղևորափոխադրումները կազմակերպելու նպատակով Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությանը 2018 թվականի ինն ամսում հատկացնել 3 456 000 (երեք միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 463700 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հուլիսի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր
«ԳԱՆՁԱՍՄԱՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ», «ՀՈՒՆՈՏԻ ԿԻՐՃ»
ԵՎ «ՏՈՂ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՎ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՍՂՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույնով հաստատվում են 2018 թվականի հուլիսի 15-ից մինչև սեպտեմբերի 5-ը Արցախի Հանրապետության պատմամշակութային, բնապատմական և զբոսաշրջային վայրեր ճանաչողական այցերի (ուղևորության)՝ Ստեփանակերտից դեպի «Գանձասարի վանական համալիր», «Հունոտի կիրճ» և «Տող» զբոսաշրջային երթուղիներով (այսուհետ՝ զբոսաշրջային երթուղի) ուղևորափոխադրումների կազմակերպման պայմանները:

2. Զբոսաշրջային երթուղիներով ուղևորափոխադրումները կազմակերպվում են «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) և ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ փոխադրող) միջև կնքված ուղևորափոխադրումների կազմակերպման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) հիման վրա:

3. Պայմանագիրը կնքվում է զբոսաշրջային պայմաններին համապատասխանող արտաքին ու ներքին կահավորվածությամբ ավտոբուսներ ունեցող փոխադրողի հետ:

4. Պայմանագրում մանրամասն սահմանվում են ուղևորափոխադրումների կազմակերպման, ուղերթերի գրանցման, փոխադրավարձերի վճարման և այլ պայմանները:

5. Սույն պայմանների 1-ին կետում նշված զբոսաշրջային երթուղիներով իրականացված ուղևորափոխադրումների վճարները (փոխադրավարձերը) վճարում է Կազմակերպությունը՝ պայմանագրի հիման վրա, տասնհինգօրյա պարբերականությամբ:

6. Ուղևորափոխադրումներն իրականացվում են վաճառվող ուղետոմսերի հիման վրա: Ուղետոմսերն ունեն սպարանային համարակալում և համարվում են խիստ հաշվառման փաստաթուղթ:

7. Ուղետոմսերի վաճառքը կազմակերպվում է Կազմակերպության կողմից, որոնց վաճառքի գները կազմում են՝

- 1) «Նիկոլ Դումանի տուն-թանգարան»-«Գանձասարի վանական համալիր» ուղղությամբ՝ 250 ՀՀ դրամ.
- 2) «Հունոտի կիրճ» ուղղությամբ՝ 100 ՀՀ դրամ.
- 3) «Տնօրե»-«Տող» ուղղությամբ՝ 250 ՀՀ դրամ:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2018թ.

N 689-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 603 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Քարին տակի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,67914 հեկտար թփուտը փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ բազմամյա տնկարկների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2018թ.

N 690-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,54 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2018թ.

N 691-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 677 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկայի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0828 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր Շուկայի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2018թ.

N 692-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 1-Ի N 135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 135-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 54-րդ կետի 4-րդ սյունակի «Առաջին եռամսյակ» բառերը փոխարինել «Երրորդ եռամսյակ» բառերով.

2) 55-րդ կետի 4-րդ սյունակի «Առաջին եռամսյակ» բառերը փոխարինել «Չորրորդ եռամսյակ» բառերով.

3) 58-րդ կետի 4-րդ սյունակի «Երկրորդ եռամսյակ» բառերը փոխարինել «Չորրորդ եռամսյակ» բառերով.

4) 61-րդ կետի 4-րդ սյունակի «Երկրորդ եռամսյակ» բառերը փոխարինել «Չորրորդ եռամսյակ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2018թ.

N 693-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից որոշ հիվանդություններով տառապող քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 14-ի N 61 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 23-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N61 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից որոշ հիվանդություններով տառապող Արցախի Հանրապետության քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:».

3) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

4) ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի օգոստոսի 21-ի N 693-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2013 թվականի հունվարի 29-ի N 23-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԱՐՑԱՒԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ**

1. Սույն կարգով սահմանվում են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից որոշ հիվանդություններով տառապող Արցախի Հանրապետության քաղաքացիներին (այսուհետ՝ քաղաքացի) Արցախի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին դրամական օգնություն (այսուհետ՝ օգնություն) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից օգնություն տրվում է քաղաքացու դիմումն ընթացքավորելու և քաղաքացուն օգնություն տրամադրելու նպատակով Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված ներքին ընթացակարգով՝ սրտի վիրահատությունների և չարորակ նորագոյացությունների բուժման նպատակով ձեռք բերված դեղորայքի (հակառուռոցային), անհրաժեշտ գումարի 50 տոկոսը, որը չպետք է գերազանցի 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարը, ինչպես նաև բացառիկ դեպքերում, մինչև 18 տարեկան, հազվադեպ հանդիպող հիվանդություններով տառապող անձանց բուժման դիմաց՝ անհրաժեշտ գումարի 100 տոկոսը, որը նույնպես չպետք է գերազանցի 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարը: Դրամական օգնությունը տրվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

3. Տարվա ընթացքում քաղաքացուն օգնություն է տրամադրվում մեկ անգամ: Քաղաքացին տարվա ընթացքում մեկ անգամից ավելի օգնություն կարող է ստանալ միայն անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվելու դեպքում:»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2018թ.

N 699-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի և N 3 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՑՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՑՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	360 000,0	-
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	(150 000,0)	(220 000,0)
	9		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	(150 000,0)	(220 000,0)
		1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	(150 000,0)	(220 000,0)
		02	Նյութական ռեսուրսների ԱՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում	-	-	(150 000,0)	(220 000,0)
			ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայություն	-	-	(150 000,0)	(220 000,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ	-	-	510 000,0	220 000,0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	-	409 000,0	209 000,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	409 000,0	209 000,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	409 000,0	209 000,0
			ԱՀ կառավարություն	-	-	409 000,0	209 000,0
	2		Այլ ծախսեր	-	-	101 000,0	11 000,0
		1	Այլ ծրագրեր	-	-	101 000,0	11 000,0
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	150 000,0	150 000,0
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	-	-	150 000,0	150 000,0
		03	Հանրապետական միջոցառումների (միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ) իրականացման ծրագրեր	-	-	(20 000,0)	(110 000,0)
			ԱՀ կառավարություն	-	-	(20 000,0)	(110 000,0)
		07	Նախորդ տարիներից առաջացած պարտքերի մարում	-	-	(29 000,0)	(29 000,0)
			ԱՀ կառավարություն	-	-	(29 000,0)	(29 000,0)

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱԿԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
	Առաջին եռամ- սյակ	Առաջին կիսամ- յակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	360 000,0	-
այդ թվում՝				
Փոխառու գույտ միջոցներ	-	-	360 000,0	-
1. Վարկերի և փոխառվածությունների ստացում	-	-	360 000,0	-

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 օգոստոսի 2018թ.

N 721-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
12-Ի N 99-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N2 հավելված N1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 12-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N99-Ա որոշմամբ հաստատված հավելվածի

1) 11-րդ կետում՝

ա. «2 201 091,1» թիվը փոխարինել «2 301 091,1» թվով,

բ.«Պատերազմական գործողություններից և կարկտահարությունից տուժած հողօգտագործողներին աջակցություն (2017 թվականի պարտքերի մարում)» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«

	Անասնապահության զարգացման խթանում	100 000,0
--	-----------------------------------	-----------

».

2) 14-րդ կետում «206 974,2» թիվը փոխարինել «102 194,2» թվով.

3) «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «4 704 807,6» թիվը փոխարինել «4 700 027,6» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի օգոստոսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ
N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերով)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ՕՒՍՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	2		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	-	-	-	-
		1	Գյուղատնտեսություն	-	-	-	-
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	-	1 000.0	4 780.0
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	-	1 000.0	4 780.0
		12	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	-	-	65 974.2	100 000.0
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	-	65 974.2	100 000.0
		15	Խոշոր եղջերավոր կենդանիների մտուրային պահվածքի ծախսերի փոխհատուցում	-	-	(66 974.2)	(104 780.0)
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	-	(66 974.2)	(104 780.0)

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱԿԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 օգոստոսի 2018թ.

N 722-Ն

ք.Ստեփանակերտ

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԱՅԼ
ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N 520-Ն
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**։

1. Սահմանել ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝

1) հաստատել օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմամբ արդյունաբերական գնահատման (վերագնահատման), պաշարների հաշվարկման (վերահաշվարկման) և հետագա աշխատանքներով չհավաստված պաշարների դուրսգրումը հիմնավորող նյութերի բովանդակության, ձևավորման և դրանք պետական ընդերքաբանական փորձաքննության ներկայացնելու կարգը.

2) ստեղծել պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողով և հաստատել պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կանոնակարգը, պետական ընդերքաբանական փորձաքննության գործընթացում անկախ փորձագետների ներգրավման կարգը:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի N 287 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 520-Ն որոշումը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԳ

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԿԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԱՅԼ
ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՃԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում է ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության պետական ընդերքաբանական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) կարգը:

2. Փորձաքննությունն իրականացնում է Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության արժանահավատությունը գնահատելու, օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաներն ու պաշարները հաստատելու, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրման հիմնավորվածության մասին եզրակացություն տալու նպատակով:

3. Փորձաքննության պարտադիր ենթակա են հանքավայրերի մանրագնին և շահագործական հետախուզման, ինչպես նաև դրանց լրահետախուզման արդյունքների հիման վրա կազմված կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմամբ հանքավայրերի արդյունաբերական գնահատման (վերագնահատման), օգտակար հանածոների պաշարների հաշվարկման (վերահաշվարկման), ինչպես նաև պաշարների՝ սույն կարգի 2-րդ կետում նշված պատճառներով դուրսգրման անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը (այսուհետ՝ նյութեր):

4. Փորձաքննության կարող են ենթարկվել նաև մանրագնին հետախուզմանը նախորդող փուլերի արդյունքների հիման վրա կազմված կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմամբ հանքավայրի արդյունաբերական գնահատման և պաշարների հաշվարկման նյութերը, եթե դրանցում պարունակվող տեղեկությունը բավարար է օգտակար հանածոների քանակի, որակի ու հանքավայրի արդյունաբերական նշանակության օբյեկտիվ գնահատման համար:

5. Փորձաքննության ենթակա նյութերի բովանդակությանը և ձևավորմանը ներկայացվող պահանջները սահմանվում են օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմամբ արդյունաբերական գնահատման (վերագնահատման), պաշարների հաշվարկման (վերահաշվարկման) և հետագա աշխատանքներով չհավաստված պաշարների դուրսգրումը հիմնավորող նյութերի բովանդակության, ձևավորման և դրանք փորձաքննության ներկայացնելու մասին կարգով:

6. Փորձաքննության գործընթացը ներառում է՝

1) փորձաքննության ներկայացված նյութերի բովանդակության, լիարժեքության և ձևավորման նախնական գնահատումը.

2) նյութերի փորձաքննության աշխատատարության ու տևողության որոշումը, նախարարության հաստիքային աշխատողներից տվյալ նյութերի փորձաքննության պատասխանատուի նշանակումը, փորձաքննության գործընթացում Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի (այսուհետ՝ նախարար) կողմից սահմանված կարգով անկախ փորձագետների (այսուհետ՝ փորձագետ) ներգրավումը.

3) նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությունը, դրանցում բացթողումների և սխալների բացահայտումն ու աշխատանքային քննարկումները.

4) բացահայտված թերությունների և բացթողումների վերացումն ու լրացուցիչ տարբերակների դիտարկումը.

5) փորձաքննության ընթացքում արվող մասնագիտական եզրակացությունների և առաջարկությունների նախագծերի մշակումը.

6) մասնագիտական եզրակացությունների և առաջարկությունների նախագծերի քննարկումը, դրանց ճշգրտումը (հարկ եղած դեպքում) և օգտակար հանածոների պաշարները պետական հաշվեկշռում գրանցելու համար հիմք հանդիսացող փորձաքննության եզրակացության ընդունումը.

7) փորձաքննության եզրակացության հիման վրա նախարարի սահմանած կարգով՝ կոնդիցիաների պարամետրերի և (կամ) օգտակար հանածոների պաշարների հաստատման մասին որոշման (այսուհետ՝ որոշում) ընդունումը.

8) նախարարի կողմից սահմանված կարգով որոշման փաթեթի ձևակերպումը.

9) որոշման փաթեթի առաքումը նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալություն՝ պահպանության:

7. Սույն կարգի 6-րդ կետի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված գործառույթների իրականացման նպատակով ներգրավվում են փորձագետներ:

8. Սույն կարգի 6-րդ կետի 6-րդ ենթակետում նշված գործառույթն իրականացնում է նախարարի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն նախարարությունում գործող պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովը:

9. Փորձաքննության գործընթացի տևողությունը սահմանելիս հաշվի է առնվում հանքահումքի տեսակը, հանքավայրի երկրաբանական կառուցվածքի բարդությունը, դրա երկրաբանական ուսումնասիրության փուլը, արդյունաբերական յուրացման աստիճանն ու ներկայացված նյութերի ծավալը, ստորև նշված ժամկետային սահմանափակումներով՝

1) ոչ հանքաքարային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի հանքավայրերի համար՝ մինչև 60 աշխատանքային օր.

2) հանքային ջրերի հանքավայրերի համար՝ մինչև 90 աշխատանքային օր.

3) հանքաքարային հանքավայրերի համար՝ մինչև 120 աշխատանքային օր:

10. Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների կամ պաշարների հաստատման, ինչպես նաև վերջիններիս դուրսգրման հիմնավորվածությունը հավաստելու մասին բացասական որոշման ընդունման դեպքում փորձաքննված նյութերը վերադարձվում են հեղինակներին՝ լրամշակման:

11. Փորձաքննության եզրակացությունը կարող է բողոքարկվել նախարարին՝ փորձաքննության գործընթացի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:

12. Փորձաքննության գործընթացը համարվում է ավարտված՝ սույն կարգի 6-րդ կետի 8-րդ ենթակետում նշված գործառույթի իրականացմամբ:

13. Փորձաքննության եզրակացության բողոքարկման դեպքում նշանակվում է նյութերի լրացուցիչ փորձաքննություն, որը կատարվում է սույն կարգի համաձայն:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 սեպտեմբերի 2018թ.

N 730-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 153 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի Տումիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2264 հեկտար արոտավայրը և պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,0784 հեկտար անտառը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 սեպտեմբերի 2018թ.

N 731-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս, շրջանի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,729 հեկտար անտառը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 սեպտեմբերի 2018թ.

N 743-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Գազարինի N 17ա հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,0062 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2018թ.

N 749-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 343 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի «6 կՎ և բարձր լարման նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգի մասին» N 343 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման «գ» ենթակետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» ենթակետ.

«դ) էլեկտրատեղակայանքի գործարկման եզրակացության տրամադրման դիմումի և թերությունների վերացումից հետո էլեկտրատեղակայանքի գործարկման եզրակացության տրամադրման դիմումի ձևերը՝ համաձայն որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի:».

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Էլեկտրատեղակայանքները գործարկմանը պատրաստ լինելու դեպքում դրանց սեփականատերը (լիազորված անձը) գրավոր դիմում է լիազոր մարմին՝ միաժամանակ ներկայացնելով 6 կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքների կառուցման ու վերակառուցման համար տրված էլեկտրասնման տեխնիկական պայմանները: Դիմումը կարող է ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով:».

3) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Էլեկտրատեղակայանքների սեփականատիրոջ դիմումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնի մասնագետ-տեսուչը կատարում է էլեկտրատեղակայանքների ակնադիտական ուսումնասիրություն և կազմում ակտ-կարգադրագիր, որում, համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի N 343 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի ցանկի, էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ առանձին դեպքերում՝ փոստի, թղթային ձևով, նշվում են լիազոր մարմին ներկայացված տեխնիկական փաստաթղթերի անվանումները, ինչպես նաև տեղադրված և հավաքակցված էլեկտրատեղակայանքների համապատասխանությունը նախագծին, տեխնիկական պայմաններին և տեխնիկական կանոնակարգերին: Լիազոր մարմնի կողմից ընդունելի են համարվում անվտանգության որևէ նորմի խախտմանը չհանգեցնող

նախագծից այն տարբերությունները, որոնք փաստացի առկա են և գրավոր հիմնավորված: Ակտ-կարգադրագրի դրական եզրակացության հիման վրա տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի N 343 որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով նախատեսված էլեկտրատեղակայանքի գործարկման եզրակացությունը:».

4) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 9-րդ կետից հանել «էլեկտրական պաշտպանիչ միջոցների,» բառերը.

5) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Ակտ-կարգադրագրում նշված թերությունների վերացման մասին էլեկտրատեղակայանքների սեփականատիրոջ (լիազորված անձի) գրավոր դիմումից հետո, լիազոր մարմնի մասնագետ-տեսուչը թերությունների վերացումը հաստատելու և գործարկման եզրակացություն տալու նպատակով երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարում է էլեկտրատեղակայանքների ակնադիտական ուսումնասիրություն և թերությունների վերացումը հաստատելու դեպքում տալիս է էլեկտրատեղակայանքի գործարկման եզրակացություն:».

6) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 1-ին գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Էլեկտրատեղակայանքները գործարկմանը պատրաստ լինելու դեպքում դրանց սեփականատերը (լիազորված անձը) լիազոր մարմին է ներկայացնում՝

ա) դիմում՝ էլեկտրատեղակայանքները տեխնիկական ստուգման ենթարկելու մասին,

բ) էլեկտրասնման տեխնիկական պայմանները:

2. Էլեկտրատեղակայանքների ակնադիտական ուսումնասիրության ժամանակ դրանց սեփականատերը (լիազորված անձը) մասնագետ-տեսուչին է տրամադրում՝

ա) էլեկտրատնտեսության պատասխանատու անձի նշանակման մասին հրամանի պատճենը, իսկ ֆիզիկական անձանց համար՝ էլեկտրատնտեսության պատասխանատու անձի հետ կնքված պայմանագրի բնօրինակը,

բ) տեխնիկական պայմաններին համապատասխան էլեկտրատեղակայանքների տեխնիկական նախագծի պատճենը՝ կազմված լիցենզավորված կազմակերպության (անձի) կողմից,

գ) հաշվեկշռային պատկանելության և կողմերի շահագործման պատասխանատվության սահմանազատման մասին երկկողմ վավերացված ակտի պատճենը,

դ) էլեկտրամատակարարման միագիծ սխեման,

ե) համապատասխան դեպքերում՝ որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածով սահմանված այլ փաստաթղթերի պատճենները:».

7) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 5-րդ գլխի վերնագրում «ԷԼԵԿՏՐԱՇԱՐՇԻՉՆԵՐԻ» բառից հետո լրացնել «ՈՒ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ» բառերը.

8) որոշումը լրացնել նոր՝ թիվ 4 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի սեպտեմբերի 11-ի N 749-Ն որոշման

«Հավելված 4
ԼՂՀ կառավարության
23 օգոստոսի 2005թ. թիվ 343 որոշման

2և N1

Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և
արտադրական ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության պետ
_____ -ին
(անունը, ազգանունը)

Դիմող _____

Ֆիզիկական անձ _____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Իրավաբանական անձ _____
(սեփականատիրոջ (լիազորված անձի) անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԷԼԵԿՏՐԱՏԵԴԱԿԱՑԱՆՔԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Խնդրում եմ տրամադրել _____ էլեկտրատեղակայանքի
(տր կառուցված/վերակառուցված)

գործարկման եզրակացություն:

Էլեկտրատեղակայանքի տեղադրման վայրը _____

Անվանական լարումը _____ (կՎ)

Լարման տեսակը _____

Կից՝ ներկայացնում եմ էլեկտրասնման տեխնիկական պայմանները (_____ էջ):

Դիմող _____
(ստորագրությունը) (սեփականատիրոջ (լիազորված անձի) անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի Էներգետիկայի պետական տեսչության պետ _____-ին

(անունը, ազգանունը)

Դիմող

Ֆիզիկական անձ _____

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Իրավաբանական անձ _____

(սեփականատիրոջ (խագորված անձի) անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

_____ (իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հայտնում եմ, որ վերացվել են Ձեր կողմից տրամադրված _____ 20 թ. N _____ ակտ-կարգադրագրում նշված թերությունները:

Խնդրում եմ տրամադրել _____ էլեկտրատեղակայանքի նոր կառուցված (վերակառուցված)

գործարկման եզրակացություն:

Դիմող

_____ (ստորագրությունը)

_____ (սեփականատիրոջ (խագորված անձի) անունը, ազգանունը)

_____ 20 թ. »:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

11 սեպտեմբերի 2018թ.

N 752-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՄԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) 19-րդ կետի 2-րդ պարբերությունում «անձանց» բառից հետո լրացնել «(բացառությամբ փոխկապակցված անձանց՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր)» բառերը.

2) 23-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների, ինչպես նաև ծխախոտի մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով կաթիլային համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է 750 000-ական ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով:

Երեք ու բարձր տարիքի բազմամյա տնկարկների և բանջարեղենի մշակության դեպքում անտոկոս փոխառության տեսքով տրամադրվում է մեկ հեկտարի հաշվարկով առավելագույնը 1 500 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.»,

բ. 6-րդ ենթակետի «ա» պարբերությունում «3-րդ ենթակետի» բառերը փոխարինել «4-րդ ենթակետի» բառերով,

գ. 6-րդ ենթակետի «բ» պարբերությունում «3-րդ ենթակետի» բառերը փոխարինել «4-րդ ենթակետի» բառերով, իսկ «4-րդ ենթակետով» բառերը՝ «5-րդ ենթակետով» բառերով,

դ. 10-րդ ենթակետում «7-րդ ենթակետում» բառերը փոխարինել «8-րդ ենթակետում» բառերով.

3) N 3 ձևից հանել «ծխախոտի դեպքում՝ առնվազն մեկ, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

փոփոխվել է՝ հայցը բավարարվել. Մ.Հակոբյանից հոգուտ Մ.Համբարձում-
յանի՝ իրենց անչափահաս երեխաներ՝ 2005թ. նոյեմբերի 6-ին ծնված Ի.Հակոբ-
յանի և 2011թ. փետրվարի 8-ին ծնված Մ.Հակոբյանի խնամքի համար բռնա-
զանձվել է ալիմենտ՝ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով՝ յուրա-
քանչյուր երեխայի համար 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամի չափով, և՛ բա-
ժիններով՝ Մհեր Վարդգեսի Հակոբյանի վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ
երրորդի չափով:

Առաջին ատյանի դատարանը ԸԻԴ/1452/02/17 քաղաքացիական գործով
Հայցվոր-պահանջատիրոջը տվել է կատարողական թերթ:

ԱՀ գլխավոր հարկադիր կատարող Ֆ.Գաբրիելյանը 2018թ. հունիսի 4-ին
դիմում է ներկայացրել դատարան՝ կատարողական թերթը պարզաբանելու
համար:

Առաջին ատյանի դատարանը դիմումի քննարկման արդյունքում 2018թ.
հունիսի 15-ի որոշմամբ տվել է կատարողական թերթի պարզաբանում:

Նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել Պատասխանողը:

Վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝
Առաջին ատյանի դատարանի 2018թ. հունիսի 15-ի որոշումը վերացվել:
Պարզաբանվել է, որ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի
դատարանի ԸԻԴ/1452/02/17 քաղաքացիական գործով տված կատարողական
թերթում նշված՝ «Մհեր Վարդգեսի Հակոբյանից հոգուտ Մ.Համբարձումյանի՝
իրենց անչափահաս երեխաներ՝ 2005թ. նոյեմբերի 6-ին ծնված Ինեսսա Մհերի
Հակոբյանի և 2011թ. փետրվարի 8-ին ծնված Մարատ Մհերի Հակոբյանի
խնամքի համար բռնազանձել ալիմենտ միաժամանակ և՛ դրամական կայուն
գումարով՝ յուրաքանչյուր երեխայի համար 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամի
չափով, և՛ բաժիններով՝ Մհեր Վարդգեսի Հակոբյանի վաստակի և (կամ) այլ
եկամտի մեկ երրորդի չափով:», պետք է հասկանալ, որ կանոնավոր վաստակի
և (կամ) այլ եկամտի առկայության պայմաններում Մ.Հակոբյանից պետք է
զանձվի ալիմենտ բաժնային հարաբերակցությամբ, իսկ կանոնավոր
վաստակի և (կամ) այլ եկամտի բացակայության դեպքում՝ կայուն դրամական
գումարով, ընդ որում, կանոնավոր վաստակի և (կամ) այլ եկամտի
առկայության պայմաններում բաժնային հարաբերակցությամբ գանձվող
ալիմենտի չափը չպետք է պակաս լինի կայուն դրամական գումարով
բռնազանձվող ալիմենտի չափից:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Հայցվորը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում
ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԱՀ
Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը, 109-րդ հոդվածի 3-րդ մասը, ԱՀ
քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն
հանգամանքը, որ, թեև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի
133-րդ հոդվածը չի նախատեսում վճիռը պարզաբանելու հարցը լուծելու
համար դատական նիստը հրավիրելու և դատավարության մասնակիցներին

հրավիրելու պարտականություն, սակայն դատարանը պետք է հնարավորություն ընձեռի ներկայացնելու բողոքի պատասխան, ինչը չի ապահովվել:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փոխել է գործով կայացրած վճռի բովանդակությունը, դրանով իսկ խախտելով վերը նշված նորմերի պահանջները:

Բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.06.2018թ. «Վերաքննիչ դատարանի 07.09.2017թ. թիվ ԸԻԴ/1452/02/17 քաղաքացիական գործով որոշումը պարզաբանելու մասին» որոշումը:

3. Գերագույն դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը.

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Գերագույն դատարանն այն համարում է հիմնավոր հետևյալ պատճառաբանություններով.

ԱՀ գլխավոր հարկադիր կատարող Ֆ.Գաբրիելյանը, իրագործելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված կատարողական թերթում նշված պահանջների պարզ չլինելու դեպքում՝ կատարողական թերթ տված դատարանին այն պարզաբանելու նպատակով դիմելու հնարավորությունը, դիմել է Վերաքննիչ դատարան, խնդրելով պարզաբանել կատարողական թերթը:

Հաշվի առնելով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի մասին 35-րդ հոդվածը սահմանում է, որ հարկադիր կատարողը նշված պարզաբանումը ստանալու համար կարող է դիմել կատարողական թերթ տված դատարան, դիմումը կից փաստաթղթերով վերահասցեագրվել է Առաջին ատյանի դատարան:

Դիմումատուն խնդրել է պարզաբանել «..պարտապանի վաստակ և /կամ/ այլ եկամուտ ունենալու դեպքում, հոգուտ պարտատիրոջ դրամական կայուն գումարով յուրաքանչյուր երեխայի համար 30.000 /երեսուն հազար/ական ՀՀ դրամ անհրաժեշտ է բռնագանձել, թե պետք է բավարարվել պարտապանի վաստակից և /կամ/ եկամուտից կատարվող պահումներով»:

Առաջին ատյանի դատարանը դիմումի քննարկման արդյունքում 2018թ. հունիսի 15-ի որոշմամբ տվել է կատարողական թերթի հետևյալ պարզաբանումը՝ Մ.Հակոբյանից հոգուտ Մ.Համբարձումյանի՝ իրենց անչափահաս երեխաներ՝ 2005թ. նոյեմբերի 6-ին ծնված Բ.Հակոբյանի և 2011թ. փետրվարի 8-ին ծնված Մ.Հակոբյանի խնամքի համար պետք է բռնագանձվի միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով՝ յուրաքանչյուր երեխայի համար 30.000 ՀՀ դրամի չափով, և՛ բաժիններով՝ Մհեր Վարդգեսի Հակոբյանի վաստակի և /կամ/ այլ եկամտի մեկ երրորդի չափով ալիմենտ:

Նշված որոշումը վերացվել է Վերաքննիչ դատարանի 2018թ. հունիսի 28-ի որոշմամբ: Վերաքննիչ դատարանը պարզաբանել է. ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԸԻԴ/1452/02/17 քաղաքացիական գործով տված կատարողական թերթում նշված՝ «Մհեր Վարդգեսի Հակոբյանից հոգուտ Մարթա Թովիկի Համբարձումյանի՝ իրենց անչափահաս երեխաներ՝ 2005թ. նոյեմբերի 6-ին ծնված Բնեսսա Մհերի Հակոբյանի և 2011թ. փետրվարի 8-ին ծնված Մարատ Մհերի Հակոբյանի խնամքի համար բռնագանձել ալիմենտ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով՝ յուրաքանչյուր երեխայի համար 30.000 ՀՀ դրամի չափով, և՛ բաժիններով՝

Միեր Վարդգեսի Հակոբյանի վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ երրորդի չափով:», պետք է հասկանալ, որ կանոնավոր վաստակի և (կամ) այլ եկամտի առկայության պայմաններում Միեր Վարդգեսի Հակոբյանից պետք է գանձվի ալիմենտ բաժնային հարաբերակցությամբ, իսկ կանոնավոր վաստակի և (կամ) այլ եկամտի բացակայության դեպքում՝ կայուն դրամական գումարով, ընդ որում, կանոնավոր վաստակի և (կամ) այլ եկամտի առկայության պայմաններում բաժնային հարաբերակցությամբ գանձվող ալիմենտի չափը չպետք է պակաս լինի կայուն դրամական գումարով բռնագանձվող ալիմենտի չափից:

Գերագույն դատարանը փաստում է, որ պարզաբանման ենթակա հարցը վերաբերում է միաժամանակ և՛ կայուն դրամական գումարով և՛ բաժիններով ալիմենտ բռնագանձելուն: Նշված պարտականությունն ալիմենտ վճարողի վրա դրվել է Վերաքննիչ դատարանի 2018թ. հունիսի 28-ի որոշմամբ, ինչն արտացոլված է կատարողական թերթում:

Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ կետի 5-րդ պարբերությունը, որի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով, ինչպես նաև «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, տվել է ճիշտ և հիմնավոր պարզաբանում:

Ալիմենտի բռնագանձումը միաժամանակ կայուն դրամական գումարով և բաժիններով նախատեսված է ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածով, այն է՝

1. Ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանելու կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ կայուն դրամական գումարով, և՛ բաժիններով: Նույն մասի առաջին պարբերության նորմերը կիրառվում են, եթե այդ ծնողների վաստակից և /կամ/ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին, ինչպես նաև այն դեպքերում, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը՝ ա/ ստանում է ոչ կանոնավոր եկամուտ կամ փոփոխվող վաստակ և /կամ/ այլ եկամուտ. բ/ վաստակ և /կամ/ եկամուտ է ստանում բնամթերքի տեսքով կամ արտարժույթով. գ/ վաստակ և /կամ/ եկամուտ չի ստանում կամ չունի:

Մեկնաբանելով օրենքի նշված դրույթը, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի /ԼՂՀ ընտանեկան օրենսգիրք/ 71-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով ալիմենտ սահմանելն իրենից ենթադրում է, որ կանոնավոր վաստակի և /կամ/ այլ եկամտի առկայության պայմաններում պետք է գանձվի ալիմենտ բաժնային հարաբերակցությամբ, իսկ կանոնավոր վաստակի և /կամ/ այլ եկամտի առկայության պայմաններում բաժնային հարաբերակցությամբ գանձվող ալիմենտի չափը չպետք է պակաս լինի կայուն դրամական գումարով բռնագանձվող ալիմենտի չափից:

Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ դատարանի կողմից միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛

բաժիններով ալիմենտ սահմանվելու դեպքում դատական ակտի կատարման փուլում և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով միաժամանակյա ալիմենտի բռնագանձումն անթույլատրելի է, քանի որ դրանով կխախտվի ալիմենտ վճարողի իրավունքները:»

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն արտահայտելով նման դիրքորոշում, սխալ է մեկնաբանել նյութական օրենքը, ինչի արդյունքում կայացրել է չհիմնավորված որոշում, որը ենթակա է վերացման:

Այսպիսով, Գերագույն դատարանը սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.3-րդ հոդվածի հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 235-րդ, 253-րդ հոդվածի 2-րդ մասով, 256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Մ.Համբարձումյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ԱՀ վերաքննիչ դատարանի 2018թ. հունիսի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018թ. հունիսի 15-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	<u>ստորագրություն</u>	Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Կ.ՂԱՐԱՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԲԴ 0430/02/17

Քաղաքացիական գործ ԸԲԴ 0430/02/17

Նախագահող դատավոր՝ Հ. Գրիգորյան
Դատավորներ՝ Հ. Աբրահամյան
Վ. Սադյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ

21-ին օգոստոսի 2018թ.

ԱՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝
մասնակցությամբ՝ դատավորներ

Ն. Նարինյանի
Գ. Գրիգորյանի
Վ. Ղարայանի
Հ. Խաչատրյանի
Ի. Կարապետյանի

դորբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Հովիկ Ռաֆիկի Սարգսյանի ընդդեմ Վիոլետա Հրանտի Մելքումյանի և Արթուր Հրանտի Մելքումյանի՝ 949.300 /ինը հարյուր քառասունինը հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ բռնագանձելու, և ըստ հակընդդեմ հայցի Վիոլետա Հրանտի Մելքումյանի ընդդեմ Հովիկ Ռաֆիկի Սարգսյանի՝ 3.025.600 /երեք միլիոն քսանհինգ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2018թ. մայիսի 25-ի որոշման դեմ հայցվոր/հակընդդեմ պատասխանողի/ ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի և պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Վ.Մելքումյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան/ Հ.Սարգսյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ խնդրել է բռնագանձել Վ.Մելքումյանից և Ա.Մելքումյանից /այսուհետ՝ նաև Պատասխանողներ/ 949.300 /ինը հարյուր քառասունինը հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ որպես գույքի բարելավման համար կատարած ծախսի գումար:

Վ.Մելքումյանը /այսուհետ՝ նաև Պատասխանող կամ հակընդդեմ հայցվոր/ 2017թ. մարտի 23-ին հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան ընդդեմ Հ.Սարգսյանի՝ 3.025.600 /երեք միլիոն քսանհինգ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ բռնագանձելու մասին պահանջով:

Միաժամանակ Պատասխանողը/հակընդդեմ հայցվորը/ միջնորդել է նշանակել դատապարանքագիտական փորձաքննություն, պարզելու համար, թե որքան է կազմում 1 քառ. մետր հողատարածքի վարձավճարի արժեքը:

Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սույն քաղաքացիական գործով նշանակվել են դատաշինարարական և ապրանքագիտական փորձաքննություններ: Առաջին ատյանի դատարանի 2017թ. մայիսի 22-ի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև փորձագետի եզրակացությունը ստանալը:

Առաջին ատյանի դատարանի 2018թ. հունվարի 8-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է:

Առաջին ատյանի դատարանի 2018թ. մարտի 12-ի վճռով սկզբնական հայցը բավարարվել է ամբողջությամբ, իսկ հակընդդեմ հայցը՝ մասնակիորեն՝ 322.551,6 /երեք հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր հիսունմեկ ամբողջ, վեց տասնորդական/ ՀՀ դրամի չափով: Վճռվել է նաև, որ սկզբնական հայցը լրիվ, իսկ հակընդդեմ հայցը մասնակի բավարարելու դեպքում հաշվանց կատարելու արդյունքում Վիոլետա և Արթուր Մելքումյաններից յուրաքանչյուրից 1/2 մասով հոգուտ Հովիկ Սարգսյանի բնագանձման ենթակա ընդհանուր գումարի չափը կկազմի 675.457 /վեց հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Պատասխանողը՝ վճիռը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու՝ սկզբնական հայցը մերժելու, իսկ հակընդդեմ հայցն ամբողջությամբ բավարարելու պահանջով:

Վերոնշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել նաև Հայցվորի ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանը՝ վճիռը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու՝ հակընդդեմ հայցն ամբողջությամբ մերժելու մասին խնդրանքով:

Վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժվել են՝ ԸԻԴ/0430/02/17 քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 2018թ. մարտի 12-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել Հայցվոր /հակընդդեմ պատասխանող/ Հ.Սարգսյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը և Պատասխանող /հակընդդեմ հայցվոր/ Վ.Մելքումյանը:

2. Վ.Մելքումյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերող անձը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 276-րդ հոդվածը, 277-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասը, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 121-րդ հոդվածի 3-րդ մասը և 121.1-րդ հոդվածը:

Նշված պնդումները բողոքաբերը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 276-րդ հոդվածը, բողոքաբերը նշել է, որ Հայցվորի/հակընդդեմ պատասխանողի/ կողմից վիճելի հողատարածքն ապօրինի տիրապետելու հանգամանքը հաստատված է

օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, հետևաբար, իր տիրապետությունից գույքի դուրս գալու եղանակի վերաբերյալ որևէ ապացույց ներկայացնելու պարտականությունն ինքը չի կրում, ուստի վկայակոչած հողվածի իրավակարգավորումներն առնչություն չունեն ո՛չ սկզբնական, ո՛չ հակընդդեմ հայցերի հետ:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը կիրառել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 276-րդ հոդվածը, որը սույն վեճը լուծելիս չպետք է կիրառեր: Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Առաջին ատյանի դատարանի իրավական դիրքորոշումը, կիրառել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի 3-րդ մասը, որը չպետք է կիրառեր և չի կիրառել նույն հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր:

Ըստ բողոք բերողի՝ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր կասկածի տակ դնել Առաջին ատյանի դատարանի 2016թ. օգոստոսի 16-ի ԸԲԴ 1103/02/2015 քաղաքացիական գործով և Գերագույն դատարանի 2014թ. նոյեմբերի 25-ի ԸԲԴ 2175/02/2013 որոշման մեջ արձանագրված այն փաստերը, որ իր սեփականության իրավունքի գրանցման վկայականում ներառված 31.92 քառ.մետր հողատարածքն առանց օրինական հիմքերի տիրապետում է Պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Ն.Սարգսյանը, և որ նա տիրապետում է այդ տարածքը 2007 թվականից, որ սույն գործով Հայցվորի իրավանախորդը հողատարածքն օգտագործել է իր իրավանախորդի համաձայնությամբ:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի՝ որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից և վիճարկվել են վերաքննիչ բողոքով՝ սակայն Վերաքննիչ դատարանը դրանց վերաբերյալ հանգել է այն եզրակացության, որ Առաջին ատյանի դատարանը որևէ սխալ թույլ չի տվել: Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, այդ թվում՝ եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ: Նույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Բողոքաբերը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն, ի խախտումն նշված օրենքի, առանց որևէ իրավական վերլուծության, հաստատված է համարել իր կողմից բողոքարկված Առաջին ատյանի դատարանի դատական ակտում արտացոլված պատճառաբանությունները, չի անդրադարձել վերաքննիչ բողոքում մատնանշված՝ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված նյութական և դատավարական նորմերի խախտումներին, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել մատնանշված փաստական և իրավական հանգամանքները, պատշաճ չի պատճառաբանել վերաքննիչ բողոքը մերժելու հիմքերը, դրանով իսկ կայացնելով անհիմն դատական ակտ:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել վերաքննիչ բողոքը մերժելու հիմքերը, հղում չի կատարել միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի նորմերին, Գերագույն դատարանի նախադեպային որոշումներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, բողոքաբերը խնդրել է իր կողմից ներկայացրած բողոքի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2018թ. մայիսի 25-ի որոշումը և նույն մասով այն փոփոխել՝ մերժելով հայցն իրենից և Ա.Մելքումյանից 949.300 /ինը հարյուր քառասունինը հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ բռնագանձելու և բավարարելով հակընդդեմ հայցը՝ 915.146,4 /ինը հարյուր տասնհինգ հազար հարյուր քառասունվեց ամբողջ չորս տասնորդական/ ՀՀ դրամ բռնագանձելու մասով, իսկ մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ:

3. Հ.Սարգսյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերող անձը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ և 43-րդ հոդվածները, 44-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, 49-րդ հոդվածը, 57-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ, 113-րդ հոդվածները, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասը:

Նշված պնդումները բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի սույն գործով բողոքարկված վճռում «Գործի փաստերը» բաժնի 3-րդ կետում Առաջին ատյանի դատարանի կողմից արձանագրված փաստերն իրականությանը չեն համապատասխանում և որ վճռի հիմքում դրված ապացույցները ճիշտ չեն գնահատվել: Հակընդդեմ հայցից հստակ երևում է, որ դրա առարկան և հիմքը վերաբերում են վարձավճար դիտարկված գումարի գանձմանը:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը, բողոքի հեղինակը նշում է, որ Առաջին ատյանի դատարանը սխալ է մեկնաբանել իրավանորմի պահանջները, քանի որ գործում առկա ապացույցները չի մեկնաբանել դրա համատեքստում, ուստի և չի պարզել, որ Հայցվորը կարող է և պարտավոր էր տիրապետման ապօրինի լինելու մասին իմանար ԸԲԴ 1103/02/15 քաղաքացիական գործով դատական ակտն ուժի մեջ մտնելու պահից, քանի որ մինչ այդ տարբեր դատական վեճեր են ընթացել, որոնցից դիտվում է, որ դեռ վիճելի է Պատասխանողների անվամբ կատարված իրավունքի գրանցումը: Ուստի և հակընդդեմ հայցը մասնակի բավարարելու եզրահանգման պարագայում հաշվարկները պետք է կատարվեին նշված գործով դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Բողոք բերող անձը, մատնանշելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, նշում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանն անհիմն է բավարարել հակընդդեմ հայցը՝ հիմքում դնելով փորձագետի եզրակացությունը, քանի որ փորձագետի եզրակացության ուսումնասիրությունից երևում է, որ դրանում առկա հիմնավորումները բերված են Ստեփանակերտ քաղաքի ծայրամասային թաղամասերում գործող գների համեմատությամբ:

Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանը ճիշտ է որոշել ապացուցման ենթակա փաստերը և ճիշտ է բաշխել ապացուցման բեռը կողմերի միջև, սակայն, վճռում արձանագրված փաստերից ապացուցման

առարկայի մեջ ընդգրկված փաստերից թ.8 և թ.9 կետերի տակ արձանագրվածների վերաբերյալ սխալ եզրահանգման է եկել, այն է. ապօրինի տիրապետման մասին իմանալու ժամկետը որոշելու մասով՝ ժամկետը հաշվել է 2013թ. օգոստոսի 24-ից՝ անտեսելով այն հանգամանքը, որ նշված օրն այն վիճարկվել է դատական կարգով, ուստի անվիճելի է, որ ժամկետի հաշվարկը պետք է պայմանավորված լիներ ՇԻԴ 1103/02/15 գործում արտացոլված փաստերով, և որ Առաջին ատյանի դատարանն առանց պատշաճ ապացույցների դիտարկել է 322.551,6 /երեք հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր հիսունմեկ ամբողջ վեց տասնորդական/ ՀՀ դրամի չափով վարձավճարի տեսքով գումարը որպես եկամուտ ստանալու հնարավորություն:

Բողոքաբերը շեշտել է, որ Առաջին ատյանի դատարանը սխալ է գնահատել գործում առկա ապացույցները, իսկ Վերաքննիչ դատարանն, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի վճիռը, անտեսել է այդ հանգամանքը, առերևույթ թույլ տալով էական դատական սխալ:

Հաշվի առնելով վերոգրյալները, բողոք բերող անձը խնդրել է բողոքարկված մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2018թ. մայիսի 25-ի որոշումը՝ մերժելով հակընդդեմ հայցը:

4.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հաղորդի քաղաքապետի 2003թ. դեկտեմբերի 5-ի թիվ 24 որոշման համաձայն՝ Ռ.Սարգսյանի դիմումը բավարարվել է և Շահումյան փողոցի իր տնամերձ հողատարածքից հատկացվել է 20 քառ.մետր մակերեսով հողատարածք՝ առևտրի կրպակ տեղադրելու նպատակով:

2. Հաղորդի քաղաքապետի 2004թ. օգոստոսի 24-ի թիվ 23 որոշմամբ բավարարվել է Ռ.Սարգսյանի դիմումը և Շահումյան փողոցի իր տնամերձից հատկացվել է 45.2 քառ.մետր մակերեսով հողատարածք՝ առևտրի կրպակ կառուցելու նպատակով:

3. Թիվ 090007 վկայականի համաձայն՝ Հաղորդ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 4 բնակելի տան նկատմամբ 2013թ. սեպտեմբերի 17-ին գրանցված է Հ.Մելքումյանի սեփականության իրավունքը:

4. Թիվ 134731 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ Հաղորդ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 4 բնակելի տան նկատմամբ գրանցված է Ա.Մելքումյանի և Վ.Մելքումյանի բաժնային սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրինը 1/2 բաժնի չափով:

5. ՇԻԴ 1103/02/2015 քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 2016թ. օգոստոսի 16-ի վճռի և Վերաքննիչ դատարանի 2016թ. նոյեմբերի 24-ի որոշման համաձայն՝ Վիոլետա և Արթուր Մելքումյաններին բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասից 31.92մ² մակերեսով հողամասը գտնվում է Հ.Սարգսյանի ապօրինի տիրապետության տակ և որոշված է այն հետ վերադարձնել Վ.Մելքումյանին:

6. ԱՀ Գերագույն դատարանի 2014թ. նոյեմբերի 25-ի որոշման համաձայն՝ 2010թ. ապրիլի 15-ին Ռ.Սարգսյանն իրեն պատկանող՝ Հաղորդ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 5 հասցեով գտնվող 296,54 քառ.մետր մակերեսով

բնակելի տունը և 0.101 հա մակերեսով տնամերձ հողամասը նվիրել է որդուն՝ Հ.Սարգսյանին, և 2010թ. ապրիլի 30-ին գրանցվել է Հայցվորի իրավունքը:

7. ԸԻԴ 2175/02/2013 քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 2014թ. հուլիսի 07-ի վճռի բովանդակությունից դիտվում է, որ 2013թ. օգոստոսի 24-ին Հայցվորն անշարժ գույքի կադաստրի մարմնից գրավոր տեղեկություն է ձեռք բերել այն մասին, որ Հաղորդ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 3/4/ հասցեում գտնվող հողամասի վերաբերյալ գրանցված է Արթուր և Վիտլետա Մելքումյանների բաժնային սեփականության իրավունքը, որի մեջ ընդգրկված է նաև օգտագործվող կրպակի սպասարկման տարածքը:

8. Գործում առկա է 2017թ. դեկտեմբերի 29-ին տրված Հմ 19513/17 փորձագետի եզրակացությունը:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքները պետք է բավարարել մասնակիորեն, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել, գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի...: Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից վկայակոչված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, ԼՂՀ միջազգային

պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքների՝ Վերաքննիչ դատարանի որոշման չպատճառաբանված լինելու մասին փաստարկին՝ Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերաքննիչ բողոք ներկայացնելիս յուրաքանչյուր բողոքաբեր ակնկալում է, որ կստանա իր առաջադրած իրավական հարցերի պատասխանները:

Սույն գործով վճռաբեկ բողոք բերած անձինք փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, առանց վերաքննիչ բողոքի հիմքերի պատշաճ քննարկման և գնահատման, այսինքն չի պատճառաբանել վերաքննիչ բողոքներում նշված փաստարկները՝ նյութական և դատավարական օրենքի խախտման վերաբերյալ:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որի համաձայն՝ «...Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բացակայում են վերաքննիչ բողոքները բավարարելու հիմքերը, Դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, հետևաբար պետք է կիրառել Օրենքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բողոքները մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու վերաքննիչ դատարանի լիազորությունը...», չի կարող համարվել պատշաճ պարզաբանված և հիմնավոր դիրքորոշում:

Գերագույն դատարանն իր որոշումներում արդեն իսկ անդրադարձել է Վերաքննիչ դատարանի որոշումների պատճառաբանված լինելու անհրաժեշտությանը, արտահայտելով իր դիրքորոշումը: Մասնավորապես՝ ԸԻԴ 1510/02/15 գործով Գերագույն դատարանի 2016թ. օգոստոսի 5-ի որոշումը /տես՝ քաղաքացիական գործն ըստ հայցի Արամայիս Հայկի Մարգարյանի ընդդեմ Կարեն Կամոյի Մարգարյանի, ԼՂՀ կառավարության աշխատակազմի, ԼՂՀ արդարադատության նախարարության Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի՝ ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին/, ԸԻԴ N 2525/02/2015 գործով Գերագույն դատարանի 2016թ. ապրիլի 19-ի որոշումը /տես՝ ըստ հայցի Արմեն Շավարշի Հարությունյանի ընդդեմ Հովիվ Ղարիբի Բաղասյանի և Մամվել Շավարշի Հարությունյանի՝ բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Մարոյան փողոցի թիվ 4 շենքի թիվ 21 բնակարանում բնակվելուն ուղղված խոչընդոտները վերացնելուն պարտավորեցնելու և գույքի տիրապետման ու օգտագործման կարգ սահմանելու պահանջների մասին/:

Գերագույն դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված իրավական հարցին, վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.1-ին հոդվածը սահմանում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 121.1-ին հոդվածով սահմանված պահանջները: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի

որոշումը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-ին հոդվածի համաձայն՝ 1. Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս: 2. Առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները և հաստատված փաստերը համապատասխանում են առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին: 3. Առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Նշված իրավակարգավորումը դիտարկելով սահմանադրական և կոնվենցիոն նորմերով ամրագրված արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ դատարանների վրա դատական ակտերը հիմնավորելու պահանջ դնելը նպատակ է հետապնդում նպաստել հասարակության կողմից դատական համակարգի և դատարանի նկատմամբ վստահության մեծացմանը և կոչված է ապահովել դատական պաշտպանության իրավունքի իրականացումը՝ դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: Նման պարագայում կարելի է նշել, որ դատական ակտի հիմնավորումը անհրաժեշտ է դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացման նպատակով, և դատարանները պետք է խստիվ պահպանեն դատական ակտերի պատճառաբանվածությանը ներկայացվող օրենսդրական պահանջները, ուստի այդ հիմքով վճռաբեկ բողոքների փաստարկները հիմնավոր են:

Մասնավորապես, Գերագույն դատարանը շեշտում է, որ դատաքննության դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի /նորմերի/, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթական նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Մինչդեռ, սույն գործի փաստերը վերլուծելով՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի իրականացրել վերաքննիչ բողոքների պատշաճ դատական քննություն, քանի որ բողոքներում նշված հիմքերը չեն դարձվել պատշաճ քննարկման և իրավական գնահատման առարկա, հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն Առաջին ատյանի դատարանի վճռի հիմնավորվածության մասին չեն կարող դիտարկվել որպես հիմնավորված և պատճառաբանված:

Հաշվի առնելով, որ սույն գործով առկա է նոր քննության անհրաժեշտություն, Գերագույն դատարանը քննարկման առարկա չի դարձնում Վերաքննիչ դատարանի կողմից նյութական օրենքի խախտման մասին վճռաբեկ բողոքների փաստարկները և արձանագրում է, որ նոր քննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել դատական ակտի պատճառաբանված լինելու անհրաժեշտության վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումները:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի հետևությունները հիմնված չեն գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման և գնահատման վրա, իսկ վճռաբեկ բողոքներում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար ունեն էական նշանակություն, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով սահմանված լիազորության ուժով՝ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, իսկ վերանայվող դատական ակտը բեկանել՝ գործն ուղարկելով Վերաքննիչ դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

6. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գնելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճը վերջնական լուծում չի ստացել, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատվարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր /հակընդդեմ պատասխանող/ Հովիկ Սարգսյանի ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանի և պատասխանող /հակընդդեմ հայցվոր/ Վիոլետա Մելքումյանի վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 2018թ. մայիսի 25-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն **Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ**
ստորագրություն **Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**
ստորագրություն **Կ.ՂԱՐՍՅԱՆ**
ստորագրություն **Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**
ստորագրություն **Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Վարչական գործ ԸԲԴ/0231/05/16
Վարչական գործ ԸԲԴ/0231/05/16
Նախագահող դատավոր՝ Լ. Ավանեսյան
Դատավորներ՝ Ն. Գրիգորյան
Կ. Սադյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ 22-ին օգոստոսի 2018թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝	Ն. Նարինյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ. Խաչատրյանի
	Կ. Ղարայանի
	Հ. Աբրահամյանի
	Գ. Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Արթուր Վյաչեսլավի Հակոբյանի ընդդեմ Ստեփանակերտի քաղաքային համայնքի՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին ԸԲԴ/0231/05/16 վարչական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 05-ի որոշման դեմ հայցվոր Արթուր Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի կողմից բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Արթուր Վյաչեսլավի Հակոբյանը /այսուհետ, նաև՝ Հայցվոր/ 2016 թվականի նոյեմբերի 15-ին հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ, նաև՝ Վարչական դատարան կամ Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Ստեփանակերտի քաղաքային համայնքի /այսուհետ, նաև՝ Քաղաքապետարան կամ Պատասխանող/՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջով:

Վարչական դատարանի /դատավոր Կ.Մելքունյան/ 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել վարչական գործ, իսկ 2016 թվականի դեկտեմբերի 09-ի որոշմամբ՝ հրավիրվել նախնական դատական նիստ:

Վարչական դատարանը 2016 թվականի դեկտեմբերի 19-ին հայցի հիմքը լրացնելու դիմումի ընդունման մասին որոշում է կայացրել:

2016 թվականի դեկտեմբերի 20-ին վարչական գործը հանձնվել է դատավոր Ռ.Ջհանգիրյանին:

Վարչական դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ վարչական գործն ընդունվել է վարույթ և հրավիրվել նախնական դատական նիստ:

Վարչական դատարանի 2017 թվականի փետրվարի 01-ի որոշմամբ հայցի հիմքը լրացնելու մասին Հայցվորի և նրա ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի դիմումն ընդունվել է:

Վարչական դատարանի 2017 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ Արթուր Բաղդասարի Բաղդասարյանը ներգրավվել է որպես երրորդ անձ /այսուհետ, նաև՝ երրորդ անձ/:

Վարչական դատարանի 2017 թվականի մարտի 13-ի որոշմամբ նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ գործի վարույթը կասեցվել է:

Վարչական դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և հրավիրվել նախնական դատական նիստ:

Վարչական դատարանի 2018 թվականի փետրվարի 02-ի որոշմամբ վարչական գործը նշանակվել է դատական քննության:

Վարչական դատարանի 2018 թվականի մարտի 19-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2018 թվականի ապրիլի 18-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել Հայցվորն ու նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2018 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 05-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Վարչական դատարանի 2018 թվականի մարտի 19-ի վճիռը թողնելով անփոփոխ:

Վերոնշյալ որոշման դեմ Հայցվորը և նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանը 2018 թվականի հուլիսի 04-ին վճռաբեկ բողոք են ներկայացրել Գերագույն դատարան՝ խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 05-ի որոշումը, փոփոխել այն՝ կայացնել դատական ակտ ներկայացված հայցը՝ բավարարելու մասին կամ գործը վերադարձնել Վարչական դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ, 24-րդ հոդվածների, 25-րդ հոդվածի 1-ին մասի, 26-րդ հոդվածի 3-րդ մասի, 113-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի արդյունքում կայացրել է նույն օրենսգրքի 112-րդ և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանող որոշում:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վկայակոչելով նշված նորմերի օրենսդրական շարադրանքը, բողոքաբերը նշում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատական չի տվել սույն

գործի փաստերին, մասնավորապես, փորձագետի եզրակացությանը, այլ մերժել է վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ, որ վիճելի հողամասի նկատմամբ Ա.Հակոբյանի որևէ իրավունք գրանցված չէ, հետևաբար՝ նա վիճարկվող վարչական ակտը բողոքարկելու իրավունք չունի:

Վերաքննիչ դատարանն առանց որևէ պատճառաբանության գտել է, որ եզրակացության մեջ առկա այն եզրահանգումը, թե վիճարկվող որոշումը հակասում է «Քաղաքաշինություն, հատակագծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի» 6.39. կետի պահանջներին, որի համաձայն՝ ավտոտնակի հեռավորությունը շենքի մուտքից թույլատրելի 10 մետրի փոխարեն 6.2 մետր է, չի կարող վիճարկվող ակտն անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ: Այնինչ, Հայցվորի երեխաներն ապրում են այդ նույն շենքում, և վիճարկվող որոշմամբ հատկացված տարածքի վրա արդեն գոյություն ունի երկաթյա ցանցով փաստացի օգտագործվող ավտոտնակ, որի մուտքի դարպասի հեռավորությունը շենքի մուտքից կազմում է 6.2 մետր՝ թույլատրելի 10 մետրի փոխարեն, ինչն էլ վտանգ է ներկայացնում Հայցվորի և մուտքում ապրող մյուս բնակիչների և նրանց երեխաների համար: Այս հանգամանքն էլ ապացուցում է Հայցվորի շահագրգիռ անձ լինելու փաստը, որով էլ հերքվում է ստորադաս դատարանների այն պատճառաբանությունը, թե Հայցվորը վիճարկվող վարչական ակտը վիճարկելու իրավունք չունի:

Ստորադաս դատարանները չեն անդրադարձել նաև այն փաստին, որ Հայցվորը բազմիցս դիմել է Քաղաքապետարանին՝ վիճելի հողամասը նախապատվության իրավունքով իրեն հատկացնելու խնդրանքով, որին Քաղաքապետարանը պատասխանել է, որ նշված հողի վերաբերյալ առկա է վեճ, այնինչ, մի քանի ամիս անց այն հատկացրել է երրորդ անձին:

Քաղաքապետարանը՝ ի խախտումն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջների, ոչ միայն հայցադիմումի պատասխան չի ներկայացրել, այլև չի ապացուցել իր կողմից դատաքննության ժամանակ որպես փաստական հանգամանք վկայակոչված այն փաստը, թե երրորդ անձն այդ հողամասը գնել է բնակարանի հետ միասին՝ 2014 թվականին:

Նշված պատճառաբանություններով, բողոքաբերը խնդրել է բեկանել վիճարկվող դատական ակտը բավարարելով հայցը, կամ գործն ուղարկել նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սույն բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 44 շենքի թիվ 1 բնակարանը բաժնային սեփականության իրավունքով՝ 1/5 բաժնով պատկանում է հայցվոր Արթուր Հակոբյանին /գ.թ.11/:

2. 2014 թվականի նոյեմբերի 17-ի առուվաճառքի և գրավի /հիփոթեքի/ թիվ 5711 պայմանագրի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 44 շենքի թիվ 2 բնակարանն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձին և Արմինե Էմիլի Բաղդասարյանին /գ.թ.12/:

3. 2014 թվականի ապրիլի 29-ին Հայցվորը դիմել է Ստեփանակերտի քաղաքապետին՝ ավտոտնակի կառուցման նպատակով Վ.Վաղարշյան 44

շենքի շրջակայքից հողատարածք /այսուհետ, նաև՝ վիճելի հողամաս/ հատկացնելու խնդրանքով /գ.թ.30/:

4. 2014 թվականի հունիսի 04-ին քաղաքապետը տեղեկացրել է Հայցվորին, որ ավտոտնակի կառուցման համար հողատարածք հատկացնելու նրա հարցը հնարավոր չէ բավարարել՝ տվյալ տարածքի նկատմամբ առկա վեճի պատճառով /գ.թ.29/:

5. 2015 թվականի հուլիսի 03-ին Հայցվորը դիմել է Ստեփանակերտի քաղաքապետին՝ ավտոտնակի կառուցման նպատակով Վ.Վաղարշյան 44 հասցեում իր կողմից օգտագործվող հողամասը նախապատվության իրավունքով հատկացնել իրեն /գ.թ.15/:

6. 2015 թվականի հուլիսի 20-ին քաղաքապետը տեղեկացրել է Հայցվորին, որ ավտոտնակի կառուցման համար հողատարածք հատկացնելու նրա հարցը հնարավոր չէ բավարարել՝ տվյալ տարածքի նկատմամբ առկա վեճի պատճառով /գ.թ.14/:

7. 2015 թվականի հուլիսի 28-ին Հայցվորը դիմել է Ստեփանակերտի քաղաքապետին՝ իր կողմից ներկայացված դիմումը վերանայելու խնդրանքով /գ.թ. 30/:

8. 2015 թվականի հոկտեմբերի 07-ին երրորդ անձը դիմել է Ստեփանակերտի քաղաքապետին՝ ավտոտնակի կառուցման նպատակով Վ.Վաղարշյան 44 շենքի շրջակայքից հողատարածք հատկացնելու խնդրանքով /գ.թ.20/:

9. Ստեփանակերտի քաղաքապետի 2015 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 1692Ա որոշմամբ՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան շենքի շրջակայքում գտնվող 30 քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ավտոտնակի կառուցման համար, կառուցապատման իրավունքով հատկացվել է երրորդ անձին /գ.թ.17/:

10. Նույն որոշման համաձայն՝ տրամադրվող հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման է, փաստացի մակերեսը կազմում է 30 քառակուսի մետր, այն ընդգրկված է ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում է Ստեփանակերտ քաղաքի հողերի տարածագնահատման 3-րդ գոտում:

11. Դատաշինարարատեխնիկական փորձաքննության 2017 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՄ՝ 10013/17 եզրակացության համաձայն՝ Ստեփանակերտի քաղաքապետի 2015 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 1692Ա որոշումը համապատասխանում է ՇՀԽՊ 2.07.01.-89-ի «Քաղաքաշինություն, հատակագծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի» 6.36 կետի պահանջներին, ըստ որի՝ մեկ հարկանի ավտոտնակի համար հատկացվող հողամասի մակերեսը մեկ ավտոմեքենայի համար նախատեսվում է 30մ², սակայն ավտոտնակի կառուցման պարագայում նրա հետագա նպատակային նշանակությամբ շահագործելու դեպքում խախտվում են նույն ՇՀԽՊ 2.07.01.-89-ի՝ 6.39 կետի պահանջները, մասնավորապես, նրա հեռավորությունը բնակելի շենքից կազմում է 6.2 մետր թույլատրելի 10 մետրի փոխարեն /գ.թ.91/:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ վարչական դատավարության

օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ Գերագույն դատարանի իրավական դիրքորոշումները՝ դատական պաշտպանության դիմած անձի ենթադրյալ խախտված իրավունքի իրավատեր (այսինքն՝ շահագրգիռ անձ) հանդիսանալու առումով, կարևոր նշանակություն կունենա նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Գերագույն դատարանն արձանագրում է նաև, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սխալ մեկնաբանելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. իրավաչափ է, արդյոք, վարչական մարմնի իրավասության շրջանակներում ընդունված՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի տնօրինմանն ուղղված վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի մերժումը սույն գործով Հայցվորի շահագրիռ անձ չհանդիսանալու /Հայցվորի որևէ իրավունքը խախտված չլինելու/ պատճառաբանությամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ /գործող Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մաս/՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, իսկ 45-րդ հոդվածի համաձայն՝ /գործող Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մաս/՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ՝ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ 1/խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ԼՂՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ

թվում, եթե՝ ա/խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ/չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին ԼՂՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով, 2/նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, 3/նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ԱՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձը ստանում է վերջինիս՝ ԱՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և /կամ/ ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Այսպիսով, ԱՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ որպես ընդհանուր կանոն՝ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը ևս, առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքով ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունք: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի իրական, ռեալ իրավունքներ:

Փաստորեն, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով վարչական դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտների դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն, շահագրգիռ անձ հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե արդյո՞ք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե ոչ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է ա/ օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ/ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների

հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է անվավեր ճանաչվել, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

1/ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2/վիճարկվող վարչական ակտով խախտվել են կամ կարող են խախտվել հայցվորի Սահմանադրությամբ կամ միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Վերոգրյալն ապացուցում է, որ դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Հետևաբար, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունները կատարվել են օրենքի խախտմամբ, այլ պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Արթուր Հակոբյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ստեփանակերտի քաղաքապետի 03.11.2015թ. թիվ 1692Ա որոշումը /այսուհետ, նաև՝ վիճելի որոշում/: Փաստորեն, սույն վարչական գործով վիճարկվում է Ստեփանակերտի քաղաքապետի 03.11.2015թ. թիվ 1692Ա որոշման իրավաչափությունը, որով որոշվել է Ստեփանակերտ քաղաքի Վ. Վաղարշյան թիվ 44 շենքի շրջակայքում գտնվող 30.0 քմ մակերեսով հողամասը՝ ավտոտնակի կառուցման նպատակով, կառուցապատման իրավունքով հատկացնել Արթուր Բաղդասարյանին:

Վարչական դատարանն Ա. Հակոբյանի հայցի մերժման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ վիճարկվող որոշմամբ Հայցվորի իրավունքները կամ օրինական շահերը չեն խախտվել: Մասնավորապես, որ «վիճարկվող որոշմամբ հատկացված հողամասը չի հանդիսանում բազմաբնակարան շենքի պահպանման սպասարկման համար անհրաժեշտ հողամաս, այն չի հանդիսանում այլ անձանց սեփականություն, ուստի, տվյալ հողամասը երրորդ անձին հատկացնելիս, նշված շենքի բնակիչների թույլտվությունն անհրաժեշտ չէ»: Իսկ շինարարական նորմերի խախտման հիմքով Հայցվորի փաստարկները մերժել է այն պատճառաբանությամբ, թե. «Փորձագետի եզրակացությունից բխում է, որ վիճարկվող որոշումը համապատասխանում է СНиП 2.07.01.-89-ի՝ «Քաղաքաշինություն, հատակագծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի» 6.36 կետի պահանջներին: Ինչ վերաբերում է ավտոտնակի կառուցման պարագայում դրա հետագա շահագործմամբ շինարարական նորմերի խախտմանը՝ Վարչական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող որոշմամբ երրորդ անձին հատկացվել է հողամաս, այլ ոչ թե թույլտվություն է տրվել կառուցելու և շահագործելու ավտոտնակ, հետևաբար պետք է փաստել, որ հողամասի

հատկացման որոշումն ինքնին որևէ շինարարական նորմի խախտում չի պարունակում, ուստի չի կարող խախտել Հայցվորի իրավունքը, և այս հիմքով հայցը նույնպես անհիմն է» /գ.թ.146-147/:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է, գտնելով, որ. «... հողամասի նկատմամբ անձի՝ օրենքով սահմանված կարգով ճանաչված որևէ իրավունքի բացակայության պայմաններում տվյալ անձն իրավասու չէ վիճարկել նույն հողամասն այլ սուբյեկտի տրամադրելու մասին վարչական մարմնի կայացրած վարչական ակտի իրավաչափության հարցը: ... Նույն պատճառաբանությամբ չի կարող վերաքննիչ բողոքի բավարարման հիմք հանդիսանալ դատաշինարարատեխնիկական փորձաքննության եզրակացությունը, որի համաձայն՝ չնայած Ստեփանակերտի քաղաքապետի 2015 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 1692Ս որոշումը համապատասխանում է ՇՀԻՊ 2.07.01.-89-ի՝ «Քաղաքաշինություն, հատակագծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի» 6.36 կետի պահանջներին, այնուամենայնիվ, ավտոտնակի կառուցման պարագայում, նրա հետագա նպատակային նշանակությամբ շահագործվելու դեպքում կխախտվի նույն ՇՀԻՊ 2.07.01.-89*-ի՝ 6.39 կետի պահանջները, մասնավորապես, նրա հեռավորությունը բնակելի շենքից կկազմի 6.2 մետր՝ թույլատրելի 10 մետրի փոխարեն:» /գ.թ.182-183/:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերին և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Գերագույն դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են, ստորև ներկայացվող պատճառաբանությամբ.

Գերագույն դատարանը մեկ անգամ ևս փաստում է, որ անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի իրական իրավունքներ, ուստի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական ակտերը, գործողությունները կամ անգործությունը վարչական դատավարության կարգով վիճարկելու դեպքում, անձը պետք է հիմնավորի, որ այդ վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են նրա ԱՀ Սահմանադրությամբ, օրենքներով, միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը, կամ էլ առկա է վտանգ նշվածների խախտման համար:

Սույն գործի փաստական հանգամանքների համակարգային վերլուծության արդյունքում Գերագույն դատարանը հանգում է այն եզրակացության, որ ստորադաս դատարանները սույն գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չեն կատարել, որի արդյունքում հանգել են սխալ հետևության:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ հայցվոր Ա.Հակոբյանի և երրորդ անձ Ա. Բաղդասարյանի Ստեփանակերտ քաղաքի Վաղարշյան 44 շենքի մշտական բնակիչներ և նույն շենքի առանձին բնակարանների նկատմամբ սեփականության իրավունք ունեցող սուբյեկտներ հանդիսանալու՝ սույն վարչական գործով չվիճարկված փաստերի առկայության պայմաններում, դատարանները պատշաճ գնահատման չեն արժանացրել գործում գտնվող դատաշինարարատեխնիկական փորձաքննության եզրակացությունը: Մասնավորապես, նշված եզրակացության «Հետազոտություն» բաժնում փորձագետը գտնելով, որ ավտոտնակի կառուցման համար հատկացված հողատարածքի չափերը համապատասխանում են վերը նշված շինարարական նորմի պահանջին, միաժամանակ նշել է, որ հողամասի հեռավորությունը

բնակելի շենքից կազմում է 6.2 մետր՝ թույլատրելի 10 մետրի փոխարեն, իսկ հեռավորության ապահովման պայմաններում կիսախտվի անհրաժեշտ հատկացվելիք հողամասի մակերեսը, մասնավորապես, այն կփոքրանա անհրաժեշտ 30 մետր քառակուսուց, այսինքն ստացվում է, որ Ստեփանակերտի քաղաքապետի վիճարկվող որոշմամբ ավտոտնակի կառուցման համար հատկացված հողատարածքը հետագա նպատակային նշանակությամբ շահագործելու դեպքում կարող են խախտվել վերը նշված շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Գերագույն դատարանը գտնում է, որ պետության կողմից շինարարական նորմեր և կանոններ սահմանելն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է նաև քաղաքացիների անվտանգության ապահովմանը, իսկ Հայցվորը, լինելով վիճելի վարչական ակտով հատկացված հողամասի հարևանությամբ գտնվող բնակելի շենքի բնակիչներից մեկը, իրավունք ունի պահանջելու իր և իր երեխաների անվտանգության իրավունքի երաշխիքը:

Նշված պատճառաբանությունը հիմք է տալիս փաստելու, որ անհիմն է Վարչական դատարանի այն պատճառաբանությունը /որը Վերաքննիչ դատարանը թողել է օրինական ուժի մեջ/, թե հողամասի հատկացման վերաբերյալ որոշումն ինքնին որևէ շինարարական նորմի խախտում չի պարունակում, ուստի չի կարող խախտել հայցվորի իրավունքը, քանի որ դատական պաշտպանության է ենթակա, նախ, ոչ միայն այն իրավունքը, որը խախտվել է, այլ նաև այն իրավունքը, որի խախտման վտանգն առկա է, և երկրորդ՝ վիճարկվող վարչական ակտով հողամասը երրորդ անձին հատկացվել է նպատակային նշանակությամբ՝ ավտոտնակ կառուցելու համար՝ կառուցապատման իրավունքով, որի կառուցման դեպքում էլ վերը նշված ՇՀՊ 2.07.01.-89-ի՝ 6.39 կետի կանոնը կխախտվի:

Դատական ակտ ընդունելիս լուծման ենթակա հարցերի շրջանակը սահմանված է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ 1/գնահատում է ապացույցները, 2/ որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, 3/ որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, 4/ որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio):

Դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

Դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես, պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստին:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածների 1-ին մասերի բովանդակությունից բխում է, որ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված իրավական նորմերի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Գերագույն դատարանը փաստում է, որ ստորադաս դատարաններն ի խախտումն վերը վկայակոչված իրավադրույթների, չնայած հաստատված են համարել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ այդ թվում դատաշինարարատեխնիկական փորձաքննության եզրակացությունը, սակայն այն դատավարական օրենքով պահանջված կարգով չեն հետազոտել և գնահատել, որով էլ խախտել են գործի քննության համար ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված կարգը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը Վարչական դատարան նոր քննության ուղարկելու համար:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մասնակի բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ

անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.16-118.19-րդ հոդվածներով և 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի ԸԻԴ 0231/05/16 վարչական գործով 05.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ստյանի (վարչական) դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն Ն. ՆԱԲԻՄԱՆՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություն Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ստորագրություն Կ.ՂԱՐԱՅԱՆ
ստորագրություն Հ.ԱԲԴԱՀԱՄՅԱՆ
ստորագրություն Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ